

ատոյ դաւանութիւն տուաւ, զոր արդէն յառաջագոյն տուած էր Վարդինալ Վանդեմոսի առջև ի վարչաւա, ուր ուրիշ ութը նշանաւոր եկեղեցականաց հետ գացած էր միութեան դաւանութիւնը տալու¹³⁸ :

Սակայն վէրդերէվսքի եպիսկոպոսն ձախորդութիւն ունեցաւ, վասն զի յամին 1697 Պիսթրիցի առման ժամանակ Տաճիկներէն գերի բռնուեցաւ, եւ հազիւ Քարլովիցի խաղաղութենէն ետեւ յամին 1699 ազատ թողուեցաւ: Վէրդերէվսքի մեռաւ յամին 1715 ի Վիննա¹³⁹ :

Սուչավայի ստորագրութիւն մը, 1693 ին լատին լեզուաւ գրուած¹⁴⁰, կ'ըսէ. «Սուչավայի Հայոց թիւն տղոց հետ մէկտեղ 3000 է, ունին 4 եկեղեցի, որոնցմէ 3ը ժողովրդապետական եկեղեցի է. եկեղեցիք են Ս. Երրորդութիւն, Ս. Խաչ, Ս. Սիմէոն: Այս իւրաքանչիւր եկեղեցեաց ժողովրդապետներն 150 ընտանիքէ կը հոգացուն: Հայ եպիսկոպոսը քաղաքէն դուրս կը բնակի (Զամքա): Սուչավայի հարաւային կողմը քառորդ մղոն հեռու կայ կուսաստան մը¹⁴¹, որուն եկամուտքէն խաղաղութեան ժամանակ 40 կոյս եւ այրի ի միասին մէջը կ'ապրին: Ամէնքը կ'ապրին ըստ հին սովորութեանց՝ առանց պարտաւորիչ կանոն կամ իրական ուխտ ունենալու, բայց ամենայն ջերմեռանդութեամբ եւ համեստութեամբ:»

Կոստանդին Տուքա Մոլտաւիոյ իշխանին ժամանակ (1691—1696) Հայ-կաթողիկեայ քորեպիսկոպոսն Աստուածատուր Ներսէսեան¹⁴²,